ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ՛ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածով և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 1-ին, 4-րդ,5-րդ,8-րդ մասերով, ինչպես նաև 135 հոդվածի 3-րդ մասին 2-րդ կետով՝, խնդրում ենք Ձեզ, 2022թ-ի դեկտեմբերի 20-ին, ժամը 11:00-ին գումարել Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան, հետեյալ օրակարգով՝

1) «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Զենքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու

մասին», «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» (Կ-466-12.12.2022-ՊԱ-011/0) օրենքների նախագծերի փաթեթը:

(առաջին ընթերցում)

2) «Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջեւ «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին (2021-2027) Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագիծ (Կ-474-19.12.2022-ԵԻ-011/0):

3) Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Պ-356-19.08.2022,14.11.2022-ԳԿ-011/1) օրենքների նախագծերի փաթեթը:

(երկրորդ ընթերցում)

4) Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավորների թափուր տեղի համար առաջադրված թեկնածուների ընտրություն (447-01.12.2022-)

(Բարձրագույն դատական խորհուրդը Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավորների թափուր տեղի համար Առաջարկել է Արման Թովմասյանի, Վահագն Թորոսյանի եւ Արգիշտի Ղազարյանի թեկնածությունները):

5) Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի թափուր տեղի համար առաջադրված թեկնածուների ընտրություն (448-01.12.2022-),

(Բարձրագույն դատական խորհուրդը առաջարկել է Լուսինե Աբգարյանի , Ռուբիկ Մխիթարյանի եւ Դավիթ Վեքիլյանի թեկնածությունները):

6) Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմի թափուր տեղի համար առաջադրված թեկնածուների ընտրություն (449-01.12.2022-),

(Բարձրագույն դատական խորհուրդը առաջարկել է Լիզա Գրիգորյանի , Լիլիթ Խաչատրյանի եւ Արման Կուրեխյանի թեկնածությունները):

7) Կենտրոնական բանկի նախագահի տեղակալի ընտրություն (472-15.12.2022-):

8) Կենտրոնական բանկի խորհրդի անդամի ընտրություն (473-15.12.2022):

2. Արտահերթ նստաշրջանի նախաձեռնողների ներկայացուցիչն է Արթուր Հովհաննիսյանը :

3. Կից ներկայացնում ենք նախաձեռնողների սահմանված օրակարգով 2022 թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը 11:00-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան գումարելու և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Խորհրդին միջնորդություն ներկայացնելու մասին «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 19.12.2022թ.-ի որոշումը, ինչպես նաև «2022 թվականի դեկտեմբերի 20-ին ժամը 11:00-ին գումարված՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի օրակարգի 1-ին հարցի համար քննարկման առաջարկությունների ներկայացման ժամկետ սահմանելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը:

| Պատգամավոր | Ստորագրություն | Հերթական համար |
|---|---|---|
| Ալեքսանյան Վահագն | | |
| Աղազարյան Հովիկ | | |
| Աղաջանյան Էդուարդ | | |
| Ասատրյան Մաթևոս | | |
| Ալանյան Հակոբ | | 057 |
| Արշակյան Հակոբ | | |
| Արսենյան Գուրգեն | | |
| Առուշանյան Դավիթ | | |
| Բաբայան Նարեկ | | 055 |
| Բագրատյան Սերգեյ | | |
| Բաղդալյան Լուսինե | | 041 |
| Բաթոյան Զարուհի | | |
| Բաքոյան Ռուստամ | | 061 |
| Գաբրիելյան Սիսակ | | 031 |
| Գաբրիելյան Վիլեն | | |
| Գալստյան Մերի | | 030 |
| Գասպարյան Տաթևիկ | | |
| Գրիգորյան Հռիփսիմե | | 022 |
| Գրիգորյան Նարեկ | | 059 |
| Դանիելյան Դավիթ | | |
| Դավոյան Արփինե | | 004 |
| Եղիազարյան Գայանե | | 053 |
| Եղոյան Արման | | |
| Զեյնալյան Նարեկ | | 051 |
| Թորոսյան Արսեն | | 005 |

| | | |
|---|---|---|
| Թորոսյան Շիրակ | | |
| Թումասյան Միքայել | | |
| Թունյան Բաբկեն | | 017 |
| Խաչատրյան Արմեն | | 032 |
| Խաչատրյան Վիգեն | | 023 |
| Խանդանյան Սարգիս | | 066 |
| Կարապետյան Մարիա | | |
| Կիրակոսյան Լիլիթ | | 045 |
| Կոնջորյան Հայկ | | 012 |
| Հակոբյան Էդգար | | 043 |
| Հակոբյան Համիկ | | 061 |
| Հակոբյան Հրաչյա | | 034 |
| Հակոբյան Վաղարշակ | | |
| Համանով Կնյազ | | 071 |
| Համբարձումյան Կարեն | | |
| Հովհաննիսյան Արթուր | | 052 |
| Հունանյան Հռիփսիմե | | |
| Ղազարյան Ալիսա | | 047 |
| Ղազարյան Թագուհի | | 038 |
| Ղազարյան Մարինա | | |
| Ղազարյան Սոնա | | |
| Ղալումյան Վահե | | 042 |
| Ղահրամանյան Նարեկ | | |
| Մանավազյան Արուսյակ | | 036. |
| Մելքոնյան Գուրգեն | | 009. |
| Մինասյան Լիլիթ | | |

| | | |
|---|---|---|
| Մկրտչյան Արեն | | 049 |
| Նազարյան Լենա | | |
| Պալյան Էմմա | | 056 |
| Պապոյան Գևորգ | | 021 |
| Պողոսյան Մարիամ | | 064 |
| Պողոսյան Քրիստինե | | |
| Ջուլհակյան Արուսյակ | | |
| Ռուբինյան Ռուբեն | | |
| Սանդիկով Ալեքսեյ | | |
| Սարուխանյան Կարեն | | 065 |
| Սարգսյան Հայկ | | |
| Սարգսյան Տրդատ | | |
| Սիմոնյան Ալեն | | |
| Ստեփանյան Լիլիթ | | 027 |
| Սուքիասյան Խաչատուր | | |
| Վարդանյան Ծովինար | | 019 |
| Վարդանյան Վլադիմիր | | 024 |
| Տիգրանյան Հերիքնազ | | 011 |
| Ցիրունյան Հայկ | | 068 |
| Քոչարյան Անդրանիկ | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**ՈՐՈՇՈՒՄ**

**2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը որոշեց.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին խորհրդին ներկայացնել միջնորդություն՝

2022 թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը 11:00-ին Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան գումարելու և «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Զենքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պաշտոնատար

անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» (Կ-466-12.12.2022-ՊԱ-011/0) օրենքների նախագծերի փաթեթը (առաջին ընթերցմամբ), «Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջեւ «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին (2021-2027) Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագիծը (Կ-474-19.12.2022-ԵԻ-011/0), քննարկելու վերաբերյալ, Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Պ-356-19.08.2022,14.11.2022-ԳԿ-011/1) օրենքների նախագծերի փաթեթը (երկրորդ ընթերցմամբ), ինչպես նաև Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավորների թափուր տեղի համար առաջադրված թեկնածուների ընտրության (447-01.12.2022-), Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի թափուր տեղի համար առաջադրված թեկնածուների ընտրության (448-01.12.2022-), Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմի թափուր տեղի համար առաջադրված թեկնածուների ընտրության (449-01.12.2022-) և Կենտրոնական բանկի նախագահի տեղակալի ընտրության (472-15.12.2022-), Կենտրոնական բանկի խորհրդի անդամի ընտրության (473-15.12.2022-) իրականացման վերաբերյալ:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Արցախյան 2016 և 2020 թվականների պատերազմները առաջացրեցին հետախուզական տեղեկատվության օպերատիվության, որակի բարելավման և նոր որակի հետախուզություն ունենալու հրամայական, ուստի կարիք կա հնարավորինս սեղմ ժամկետներում ընդունել անհրաժեշտ օրենսդրական կարգավորումները՝ նկատի ունենալով, որ նշված ոլորտում պետության լուրջ հաջողության հասնելը կապված է նաև պատշաճ իրավական կարգավորումների առկայությունից և իրականացված օրենսդրական ճշգրիտ աշխատանքից:

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին (2021-2027 թթ.) ՀՀ մասնակցության մասին» համաձայնագիրը հանդիսանում է նախորդ՝ «Ստեղծագործ Եվրոպա» (2014-2020 թթ.) ծրագրի շարունակությունը: Ակնկալվում է, որ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի շարունակությունը կխթանի մշակութային և ստեղծագործ ոլորտների մրցակցությունը: Նախորդ ծրագիրը մեծապես խթանել է Հայաստանում մշակույթի զարգացմանը: Մասնավորապես՝ «Ստեղծագործ Եվրոպա» (2014-2020 թթ.) ծրագիրը նպաստել է ճարտարապետության, երաժշտության, գրականության, կատարողական արվեստի, հրատարակչության, ռադիոյի, տեսողական արվեստի և այլ ոլորտների զարգացմանը, ուստի կարիք կա հնարավորինս սեղմ ժամկետներում ընդունել անհրաժեշտ օրենսդրական կարգավորումները:

Վճռաբեկ դատարանի պալատներում և Կենտրոնական բանկի խորհրդում թափուր տեղեր առաջանալու հետևանքով անհրաժեշտ է, որ Ազգային ժողովը արագացված կարգով իրականացնի իր սահմանադրական լիազորությունները և կատարի առաջացած թափուր պաշտոններում թեկնածուների ընտրության իր

լիազորությունը՝ հաշվի առնելով նշված մարմինների սահմանադրական դերը և նշանակությունը:

**ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

**ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

19.12.2022թ.